

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԼԵՁՈՒՆԵՐԻՑ ԱՆՑԱԾ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Հայոց լեզվի զարգացման դեռևս նախամիջին ենթաշրջանում էլ ավելի է խորանում գրական և խոսակցական լեզուների տարբերությունը: Դա պայմանավորված է նաև ժողովրդական բնույթի փոխառությունների առկայությամբ: Աշխարհաբարի կազմավորման շրջանում, սակայն, այդ փոխառությունները առավել տարածում գտան՝ ընդգրկվելով իրականության զանազան ոլորտներում: Փաստորեն՝ աշխարհաբար լեզվի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ իր բառաֆոնդը համալրվեց արաբերեն, պարսկերեն և թուրքերեն բառերով, որոնք առավել քան զանազան դրսևորումներ են գտել Խ. Արովյանի զեղարվեստական արձակում:

Խ.Արովյանի արձակ ստեղծագործություններում փոխառությունների առատ կիրառությունը բազմաթիվ պատճառաբանություններից բացի ունի նաև այլ հիմնավորումներ: Ըստ Լ. Եզեկյանի՝ Արովյանը նկատել է, որ թուրքերեն բառերի գործածությունը ոչ թե գիտակցաբար կամ ինչպես որ միտումով է լինում, այլ պարզապես սովորություն է դարձել մեր ժողովրդի համար (*Լ. Եզեկյան, Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն, Ե., 1990թ., էջ 74*): Արովյանը նկատում է. «Թուրքերը մեզանից որքան բռի են ու կոպիտ, բայց էլի ենքան ա նրանց լեզվի համն ընկել մեր ազգի բերանը, որ խաղ, հեքիաթ, առակ թուրքերեն են ասում, իրենց լեզուն թողնում, պատճառ՝ չունքի սովորություն ա ընկել: Ազգին անհավատ են կանչում, լեզուն սիրում, զարմանալու չի՞: Ախր ո՞վ ա լսել, որ ծծնոր կաթը մոր կաթիցը լավ ըլի» (*Խ. Արովյան, Ընտիր երկեր, հատ. II, Ե., 1940, էջ 357*):

Արովյանի լեզվի ուսումնասիրությունների մեջ բացակայում է արձակ ստեղծագործություններում տեղ գտած փոխառությունների համազամանալից ըննությունը: Արևելյան լեզուներից կատարած փոխառությունների մասնակի ուսումնասիրությունները չեն կարող վճռորոշ դեր խաղալ արովյանագիտության և գրական լեզվի կազմավորման որոշ հարցերի համար: Փոխառություններին ինքը՝ Արովյանը, հատուկ ուշադրություն է հատկացրել, նշել փոխառյալ բառերի անհրաժեշտ բացատրությունները, գործածության բնագավառները: Ուստի կարևորվում է ժողովրդական բնույթի փոխառությունների ուսումնա-

սիրությունը, հատկապես դրանց հնչյունական և բառակազմական առանձնահատկությունները, որպեսզի հայերեն կաղապարների հետ համատեղված արևելյան փոխառությունների գործածական նշանակությունը և ձևը հստակվեն, առավել մատչելի լինեն Արքայանի լեզվի, ժամանակաշրջանի Արարատյան բարբառի և ձևավորվող արևելահայ գրական լեզվի փոխհարաբերությունները:

Այսպես՝ փոխառություններում կիրառված են շնչեղ ձայնեղներ, որոնք գրավոր խոսքում այլագրությամբ չեն արտահայտվել: Այդ բառերը օտարաբանություններ չեն. դրանք հայերենում խիստ գործածական և ժողովրդին լավագույնս հասկանալի բառեր են և ցօրս պահպանում են իրենց արտաբերման յուրահատկությունը: Փաստորեն փոխառություններում շնչեղները որոշակի ձևով արտահայտված են. հեղինակը պահպանել է փոխառությունների արտասանությունը, հատկապես, ձայնեղ որոշ բաղաձայնների ու ձայնավորների միջև չի գործածումով (-քյա/ա/-, -գյա/ա/- և այլն): Մեր կարծիքով ձայնեղների գործածությունը հետևություն է, նման պարագայում, ոչ թե հայերենի բարբառներում կամ որոշ խոսվածքներում դրանց գոյություն ունենալու, այլ հեղինակը հիմնականում հարազատ է մնացել փոխառությունների արտասանությանը: Իսկապես, ձայնեղների գործածությունը համընդհանուր տարածում չունի Արքայանի լեզվում, իսկ Արարատյան բարբառում օրինակ զ՝ >

ա՝ հնչյունահարաբերությունը մի դեպքում՝ արդյունք է արևելյան փոխառությունների, եթե ընդունում ենք, որ Արարատյան բարբառում փոխառությունները զուրկ են եղել ձայնեղներից (օր.՝ Ռ. Մարկոսյանը «գլմրմըջօ» - «ամուր, ճկուն փայտ» բառը համարում է բարբառային, այնինչ, այդ բառը փոխառություն է, այդպես նաև «զ/յում» - «ջրի մեջ սուզվելը», «գյուռ» - «հորդ», «առատ» և այլն (Ռ. Մարկոսյան, *Արարատյան բարբառ, Ե., 1989թ., բարբառային բառերի շարքում*), մյուս դեպքում՝ Արարատյան բարբառի խոսվածքներում եղել է քառաստիճան բաղաձայնական համակարգ, որ տարածվել է նաև արևելյան լեզուներից անցած փոխառությունների վրա, իսկ ավելի համոզիչ այն հետևությունն է, որ արևելյան լեզուների հնչյունական օրինաչափություններ հայերենում հիմնականում չեն ամրագրվել, որովհետև ազդեցության արդյունք համարված իրողությունների սաղմերը եղել են դեռևս հին լեզվի ընդերքում (Գ. Ջահուկյան, *Խ. Արքայանը որպես լեզվաբան-քերականագետ, ԵՊՀ-ի գիտական աշխատությունների ժողովածու, N 42, Ե., 1954թ., էջ 531*): Արքայանը ընդհանուր առմամբ հրաժարվել է դրանցից՝ համարելով նեղ բարբառային արտասանություններ, և նման հնչյունահարաբերություն

նրա գեղարվեստական արձակում հարազատորեն առնում են հիմնականում արևելյան փոխառությունները՝ դրանով որոշ դեպքերում մեկուսանալով հայերեն բառերից:

Կան այնպիսի փոխառություններ, որոնք փոխառու լեզվում ունեն մ – ու հնչյունը՝ ցմր-դուրթ, կմլ-քուլ, *kūlfat*-քյուլֆաթ և այլն: Եթե Արարատյան բարբառում տեղ գտած հայերեն բառերում չի գործածվում ու հնչյունը, ինչպես կարծում են, ապա նույն տրամաբանությունը չի տարածվում գեղարվեստական արձակի փոխառյալ բառերի վրա, որոնցում ու-ն արտաբերվում է այնպես, ինչպես փոխառու լեզվում:

Փաստորեն՝ մի շարք փոխառյալներում, այդ թվում՝ քյուլ, քյուլֆաթ, քյու-քյուրթ, բյուլբուլ և այլ բառերում գրությամբ ու – ն պետք է հնչի ու – մ, իսկ նրան մախորդող բաղաձայնները՝ գ, ք, որ իրենցից հետո ունեն յ՝ քմայնացած:

Երկերում տեղ գտած փոխառություններում բառարմատի մասնիկ *ծ - ծ* – ն քմայնացած է արտաբերվումը. դրանից առաջ ընկած ք-ն շնչեղանում է՝ *kölga*-քյուլգա, *köx/h/va*-քյոխվա, *köndala/n/-*քյոնդալան, *körlux/g/-*քյոռլուդ. «...*ինչ բերանները գալիս էր, հենց է՛ն էին քյոնդալանա ասում...*» /Կ.Յ. 46/: Սակայն կան փոխառություններ, որոնք այս երևույթին չեն ենթարկվել՝ «*Սրանց էկած ճանփեն բռանա*» /Ա.Ս. 171, «...որ *Լիմդին հազար արած լավությունով արածը իրան հասցնի, որ իրան էնպես քոմակ արեց...*» /Լ. 309/՝ հավանաբար՝ ա/ բառի հայերենի հնչողությանը մոտեցնելու միտումով, բ/ հիշյալ բառերը հաճախականությամբ ավելին են թե՛ Արովյանի գեղարվեստական արձակում, թե՛ Արարատյան բարբառում:

Օ – ի ազդեցությամբ գ-ն քմայնանում է գյոզ, գյոզլուք, գյոլ, գյոռքեգյոռ, գյովդա, գյորա և այլ բառերում. «...*քաջ լոռըցոնց թվանքի գյուլլեն, կամ մեկ լորանի թուրը անցկենողի գլուխը տոխի պես էին թոցնում...*» /Կ.Յ. 115/, «*Գյոռխանքանց* (ընդգծումը՝ նաև հեղինակի – Մ. Բ.) *կողմիցը վեղարների սուր-սուր ծեռերը ափաշկարա ցույց տվին*» /Կ.Յ. 98/:

Արովյանի մանկավարժական այն գործերում, որոնցում կան գեղարվեստական պատումներ, հանդիպում են այնպիսի փոխառություններ, որոնք ենթարկվել են գրաբարի ավանդական ուղղագրության որոշ կանոնների. «*Ես սրա վրա միշտ քաֆայ եմ քաշում*» /Զ.Կ.Պ. 83/, «...որոյ *հիւթն կամ շիրայն գնայ և թափի ի տաքարան*» /Մ.Դ.Տ.Ն.Մ.Դ 220/: Փաստորեն՝ այս գործերը գրաբարախառն լեզվով են գրված, իսկ «Արովյանի լեզուն զերծ չի մնացել գրաբարի՝ իբրև գրական լեզվի մշակման ու հարստացման կարևոր աղբյուրներից մեկի բարերար ու նպաստիչ դերից» (Լ. Եզեկյան, *նշվ. աշխ., էջ 127*):

Արարատյան բարբառի խոսվածքներում և այլ բարբառներում եղել են բաղաձայնների հնչյունափոխական որոշ ձևեր, որոնք տարածվել են նաև փոխառությունների վրա: Շնչեղ բաղաձայնների, բ, գ, դ, ձ, ջ ծայնեղ պայթականների և պայթաշփականների դիմաց բառի տարբեր մասերում եղել են պ, կ, տ, ծ, ճ խուլերը: Այս կանոնին ենթարկված փոխառություններից հանդիպում ենք դ > տ անցումը «...ինչ դտար /ղդար/ որ...» /Լ.Կ. 148/, դուման-տուման, դուգ-տուգ, բ > պ՝ սաբուն /արաբ. sabuna/-սապուն, գ > կ՝ լաչագ-լաչակ, ռանգ-ռանկ և այլն: Արևելյան մի շարք փոխառություններ հարմարեցվել են բարբառի(ների) հնչյունափոխական երևույթներին՝ հավանաբար նույն բառերը կենսունակ ու գործածական դարձնելու համար, գրաբարում եղած դրանց հոմանիշների փոխարեն:

Հանդիպում են բաղաձայնների փոխազդեցական հնչյունափոխության մի շարք դեպքեր նույնպես: Դրափոխության երևույթ են դովլաթ-դովաթ, դարվիշ-դավրիշ (պարսկերենում հնչյունափոխական այս երևույթը նույնպես տարածված է), տարաբանության արդյունք են մի շարք փոխառյալ կրկնավոր բարդություններ՝ սուս-փուս, ափալ-թափալ, ռանգ-մռանգ, յարալու-փարալու, բաղարկություն պետք է համարել բոլրազ՝ բորան + այազ. «...շատ անգամ էնպես բորյազ ա վեր կենում...» /Լ.Կ. 262/ և այլն:

Հնչյունների կրկնություն են ձեռք բերել զուգաձևությամբ հանդես եկող գյուլլա-գյուլլա, սիլլա-սիլլա, դիլլակ-դիլլակ/գ, նալլաթ-նալաթ, բաննահի-բանահի և այլ բառեր:

Այսպիսով՝ Աբովյանի գեղարվեստական արձակի փոխառություններում հիմնականում առկա են Արարատյան բարբառին մոտ հնչյունաբանական իրողությունները 60% (համաձայն փոխառությունների և հայերեն բառերի ընդհանուր և տարբերակիչ հատկանիշների). մնացած մասը խառն է՝ ըստ փոխատու լեզվի կանոնի, ըստ խոսվածքային մասնակի դեպքերի, ըստ ընդհանուր և ժամանակաշրջանում տարածված ձևերի, բացառությունների և այլն:

Որոշ փոխառություններ, առանց իմաստի փոփոխության, առկայանում են երկակի գրությամբ. հավանաբար Աբովյանը կարևորել է դրանք՝ ընտրելու գեղարվեստական արձակին հարիր և հայերենի բառապաշարին անհրաժեշտ բառեր: Փաստորեն՝ դեռևս այդ ժամանակաշրջանում փոխառությունները կանոնավորված չէին ձևավորվող լեզվում, իսկ նոր լեզուն համակարգված չէր, քանի որ ինչպես փոխառությունների, այնպես էլ, ընդհանրապես, առանձին ձևերի ընտրության հարցում տատանումներ կային:

Փոխառությունների մեջ շեշտը հիմնականում դրսևորվում է երկու ձևով՝ 1. վերջադիր՝ դարդլամիշ, օղուշա՛ղ և այլն, (վերջադիր շեշտի ուժգնությամբ

պատճառով որոշ ծայրավորներ դառնում են ը՝ մասլախաթ - մասլըիաթ, պատն ի դուզ - պատնըդուս, իխտիար-ըխտիար, փոռ ու փոշման - փոռը փոշման և այլն), 2.վերջընթեր՝ գյո՛վդա, քոմակ: k/q/-ք > x-խ >< ց-ղ հնչյունափոխությունը, կարծում ենք, փոխառությունների ազդեցությամբ թափանցած իրողություն է:

Փոխառյալ բառերի ճնշող մեծամասնությունը կրում է Արարատյան բարբառի հնչյունափոխական առանձնահատկությունները. բացառությամբ՝ ա/ երբ ծայրավորով սկսվող բառերին ավելացվում է հ, ր/ ք ձայնորդը դ, տ առաջնալեզվային պայթականներից, խուլ շնչեղներից և պայթականներից առաջ հնչյունափոխվում է ո-ի և այլն: Ուրեմն՝ փոխառությունների հնչյունաբանական առանձնահատկությունների քննությունը դիտարկելի է դարձնում Արարատյան բարբառի և ձևավորվող գրական հայերենի հնչյունական-արտասանական համակարգը: Արովյանը միշտ չէ, որ շեղվում է փոխառությունների և բարբառային յուրահատկություններից, որն էլ, սակայն, արծակի լեզուն դարձնում է ժամանակաշրջանին հարազատ իրողություն:

Փոխառություն հասկացության նեղ ըմբռնումը շատ քիչ նյութ կարող է տալ տվյալ լեզվի մեջ առկայացած այն կաղապարների վերաբերյալ, որ արդյունք են քաղաքական-տնտեսական, մշակութային ամենչությունների, միևնույն ժամանակ, իրողություններ են՝ դրսևորվում են փոխառու լեզվի լեզվաբանական տարբեր մակարդակներում՝ «ներառելով նաև օտար հիմքերից ու բառույթներից կազմված ածանցավոր, բարդ ձևերը, բառակապակցությունները և այլն» (Լ.Յոփաննիսյան, *Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990թ., էջ 35*):

Փոխառությունների բառաբարդված ձևերը բազմակառույց հարադրություն և համադրություններ են: Դրանք իս. Արովյանի գեղարվեստական արծակ գործերում անպատեհ չեն. լեզվի և ոճի բազմահմար միջոցներից են, գեղարվեստականի լավագույն տարրեր ու ժողովրդական լեզվի արտահայտման պարզագույն օրինակներ:

Փոխառությունները, այդ թվում բառաբարդված տարրերը Արովյանի արծակի տարբեր գործերում զանազան կշիռ ունեն: Օրինակ՝ «Զվարճալի ու կարճ պատմությունը» ստեղծագործության մեջ պատահականորեն ընտրված 10 էջում առկա 3834 բառից (կրկնությամբ) 296-ը փոխառություն է, իսկ բարդությունները 34-ն են (փոխառությունները բառերի ընդհանուր թվի մեջ կազմում են 7.7 %-ը, իսկ բարդությունները՝ 0.9 %-ը, բարդությունները փոխառությունների ընդհանուր թվի մեջ կազմում են 11.5 %-ը): Մեկ այլ ստեղծագործության մեջ՝ «Վերք Հայաստանի» վեպում, նույն սկզբունքով 10 էջում հաշված 3314 բառի մեջ 317-ը փոխառություն է, 53-ը՝ բարդություն (փոխառությունները բառերի

ընդհանուր թվի մեջ կազմում են 9.6 %-ը, իսկ բարդությունները՝ 1.6 %-ը, բարդությունները կազմում են փոխառությունների 16.7 %-ը):

Կան ստեղծագործություններ, որոնցում սակավ են փոխառությունները և, բնականաբար, փոխառյալ բարդությունները. «Ջանգու» հատվածը, «Նախաշավիղ կրթության» բավականին հատվածներ, «Նոր էլիզ» և այլն ընդհանրապես փոխառություններ չիջ են կրում: Այս հիմունքով հայտնի է դառնում մի բան, որ Աբովյանի լեզվի դոստորունը տարբեր ստեղծագործություններում այլ է. նա իր արծակ գործերում հանդես է գալիս «լեզվաշինարարի կերպարով»:

Համադրական բարդությունները առկայանում են փոխատու լեզվում բարդված, ժողովրդախոսակցականում բաղադրված և գրողի կողմից կազմված ձևերով: Ընդ որում, այսպես հայերենում առաջ են գալիս բավականին բառեր. «Նոր հասկացությունը նյութականանում է փոխազդվող լեզվի մեջ, որտեղ բառային միավորը հանդես է գալիս երկու ձևով՝ 1. նոր բառային միավորի կազմումն է, որը կոչվում է նեոլոգիզմ, 2. չկա նոր բառային միավոր և չի ստեղծվում. նոր հասկացությունը յուրացվում է արդեն գոյություն ունեցող բառի իմաստով, որը կոչվում է պոլիգեմիա» (*Robert Dermerguerian, La langue arménienne en Armenian Sovietique l'évolution du vocabulaire, Marseille, 1984, p. 130*): Փոխառյալ համադրական բարդություններում, ընդհանուր առմամբ, մթագմած է բաղադրիչների ամբողջականությունը: Կան այնպիսիք, որոնք հողակապով կամ հայերենի կապակցման այլ միջոցներով են հանդես եկել. այսպես բարդության բաղադրիչներից մեկը կարող է լինել հայերեն բառ, կամ բոլոր բաղադրիչներն էլ՝ օտար միավորներ, ինչպես՝ հողմաչարիս /Պ.Յ.Գ. 304/, չարակտուր /Վ.Յ. 91/ և այլն: Հաճախ դրանց հմանիչները չկան, օր.՝ քնահարամ /Վ.Յ. 85/, ջավահրակապ /Զ.Կ.Պ.71/ և այլն, որոնք, այնուամենայնիվ, կերտվում են հայերենում, և բաղադրիչների սահմանը արդեն իսկ նկատելի է, մանավանդ՝ հայերեն հիմնական ձևայիններով բարդություններում: Աբովյանի արծակում գործածված համադրական բարդությունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի (*Լ.Յովհաննիսյանի առաջարկած դասակարգումից. հեղինակի նշված աշխատությունում, էջ 140*).

ա/ փոխառյալներ, որոնք բարդ են ծագումնաբանորեն, իսկ հայերենում գիտակցվում են իբրև պարզ. Մուշամբ /Զ.Կ.Պ.119/, զարբազան /Վ.Յ.46/, բեղաֆիլ /Վ.Յ. 47/, չարսավ /Վ.Յ.64/, տարադաշ /Վ.Յ.76/, մախսուս /Վ.Յ.99/ և այլն:

բ/ Փոխառություններ, որոնք ծագումնաբանորեն բարդ են, հայերենում էլ բառածկից գիտակցվում են որպես այդպիսին, սակայն բաղադրիչները կամ բաղադրիչներից մեկը հայերենում անկախաբար չի կիրառվում. դալմադալ /Ի.Յ. 47/, սիաբդրան /Ի.Յ. 47/, գեջդանգեջ /Ի.Յ. 48/, գյունահեյար /Ի.Յ. 49/,

դարավաշ /Ձ.Կ.Պ. 62/, վարավուրդ /Ձ.Կ.Պ.179/, իջարադար /Ձ.Կ.Պ.65/, ղշղրուն /Ձ.Կ.Պ.192/, սաթըռջամ /Պ.Տ. 273/, դարբեդար /Ը. 106/ և այլն:

զ/ Բարդություններ, որոնց բաղադրիչները անկախ կիրառություն ունեն: Այսպիսիք համեմատաբար շատ են, որոշները համոզես են գալիս թե՛ կցական, թե՛ առանձին բաղադրիչներով, որը պատճառաբանվում է մի կողմից հեղինակային մոտեցմամբ, մյուս կողմից բառի՝ խոսակցականում զուգաձև կիրառություն ստացած լինելով՝ *դարդավարամ* /Թ.Յ.Յ. 40/, *հարաճադա* /Ի.Յ. 49/, *ղոմաղդում* /Ձ.Կ.Պ.67/, *օղլուշաղ* /Ձ.Կ.Պ.75/, *փեջաշ* /Ձ.Կ.Պ.75/, *քիալ-բալա* /Վ.Յ.79/, *խանգադար* /Վ.Յ.79/, *բեզգադե* /Ձ.Կ.Պ.76/ և այլն:

դ/ Բարդություններ, որոնց բաղադրիչներից մեկը հայերեն է, ու պարզ գիտակցվում է նման կազմության բարդ լինելը. *սուփրամեջ* /Ձ.Կ.Պ.69/, *ջավահրակապ* /Ձ.Կ.Պ.71/, *թուրունաման* /Ձ.Կ.Պ.76/, *մեկդրադանի* /Ձ.Կ.Պ.83/, *էրկուդրադանի* /Ձ.Կ.Պ.83/, *քառականջ* /Ձ.Կ.Պ.131/ և այլն:

Արևելյան լեզուներից անցած հիմնական ձևայինները բառակազմության տարբեր մակարդակներում իմաստի ու ձևի առումով առանձնակի դրսևորվող կաղապարներ են: Հիշյալ տեսակետից նախընտրելի է արևելյան լեզուներից անցած և հայերենում վերլուծական բարդություններով առկայացող բառերի ուսումնասիրությունը: Արևելյան լեզուներից անցած փոխառյալներով կազմված վերլուծական բարդությունները բաժանեցինք երեք մասի:

1. Արձակում տարածված հնչյունափոխ փոխառյալ կրկնավորները բազմազան են: Դրանք ամբողջովին ծուլված են Արոյանի արձակի լեզվին և շատ դեպքերում «իմաստային երանգավորում են առաջ բերում կամ էլ նոր բառաձևեր են ստեղծում՝ տրոհման հետևանքով» (Ա. Սուրվալյան, *Հայոց լեզվի բառային կազմը*, Ե., 1955թ., էջ 155): Այդպիսիք են՝ ափուռ-չփուռ - «խառնաշփոթ», չիփ-չփախ - «մերկ» (թուրք. *çipak/ş-* չլիփաղ), մուռլու-թուռլու և այլն:

2. Անհնչյունափոխ կրկնավոր բարդությունները գերազանցապես կազմվում են հայերենի բարբառներում ընդունված եղանակներով. կան փոխառյալ այնպիսի բառերից կազմված կրկնավորներ, որոնց տվյալ՝ փոխառու լեզվում իբրև կրկնավոր համոզես չեն գալիս: Փոխառյալ կրկնավորները հայերենում համոզես են գալիս հիմնականում որոշչային կամ պարագայական գործառնությամբ՝ արտահայտելով ոչ միայն հոգնակիություն, այլև սաստկականություն. սաղ-սաղ - «կենդանի-կենդանի». «...խեղճին էնպես սաղ-սաղ սպանում...» /Օ. 282/ նաև՝ «ամբողջովին». «Բայց խեղճ Ամերիկացիքը էն գորությունը ու սովորությունը չունեին, որ էս ջաֆին դիմաման ու սաղ-սաղ մաշվում, մեռնում էին...» /Ա.Լ.Բ.253/, թիքա-թիքա - «մաս-մաս», «կտոր-կտոր». «Մինչև ես մեռնիմ ո՛չ, մինչև ինձ թիքա-թիքա չանեն...» /Վ.Յ. 234/, թաբուն-թաբուն - «ոհմակ-ոհմակ»,

«խումբ-խումբ» /Վ.Յ. 261/, քուչա-քուչա - «փողոցեփողոց», «տեղ առ տեղ» /Ա.Լ.Ք. 264/, ախմախ-ախմախ - «հիմար-հիմար»։ «...քիթս ոքամի ընկել ու կողի ֆորթի պես ախմախ-ախմախ պոչս ցցել...» /Ի.Յ. 51/, աղա-աղա - այստեղ՝ «հպարտ-հպարտ»։ «Փարպիտն ու Սուլթանն էլ էնպես աղա-աղա, ուռած-ուռած չէր ժած գալ» /Ի.Յ. 51/ և այլն։

3. Հայերենում արդեն գոյություն ունեցող կրկնավոր անվանականների կողքին առաջ են գալիս փոխառյալ այնպիսի ձևեր, որոնք խոսքում հանդես են գալիս մի կողմից՝ որպես բառակրկնությունից խուսափելու միտում, մի այլ կողմից՝ որպես ոճական ձև՝ պատկերը գեղարվեստականացնելու նպատակով։ Գ. Ջահուկյանը նման բարդությունները ընդգրկում է համադասական բարդությունների շարքը, որովհետև դրանց առանձին մասեր հանդես են գալիս մեկը մյուսի նկատմամբ համադասությամբ (Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1990թ., էջ 219-227)։

Գեղարվեստական արձակում անվանական բարդությունները արտահայտված են հիմնականում գոյականներով և ածականներով, որոնք հայերենում բարգձմանաբար կարող են նաև փոխանվանաբար դրսևորվել, ինչպես՝ մալ-դովլաթ - «ունեցած-չունեցած», «հարստություն» /Վ.Յ. 61/ և այլն։ Անվանական բարդություններից յուրահատուկ են, օրինակ՝ սարվազ-արախլու - «պարսիկ զինվոր» /Վ.Յ. 107, Միառլամ-բայրամ - «ծոմապահության տոն»։ «Միառլամ-բայրամը կերան, զնանք, էս թամաշեն ուրիշ օր էլ կտեսնիք» /Վ.Յ. 90/ և այլն։

Հարակցական այս բարդությունները Աբովյանի ձեռագրերում հանդես են գալիս տրոհմամբ կամ առանց միության գծիկի. «Կերակրոները հասել էր, հարիր տեղ խախը բոլորեշուրք, ջոկ ջոկ նստած՝ քեֆ էին անում /Ա. Ս. 15/, «Յարաղ, ասպաք առան ուսըները, ամեն մեկը մեկ բուռ հող՝ սրբությունի տեղակ՝ բերանը զցեց, մեկ քարի առաջի չոքեց...» /Վ.Յ. 201/ և այլն։

Անվանական բարդությունների մի մասն էլ ունի իմաստային և կիրառական յուրահատկություններ։ Այդպիսիք առավել գունեղ են դարձնում նկարագրությունն ու խոսքը, որոնք հիմնականում չունեն իրենց համարժեք ձևերը թե՛ հայերենի բարբառում, թե՛ գրականում։ Աբովյանի լեզվին առանձին կենդանություն ու պարզություն են հաղորդում այս բարդությունները. «Լեզվական այս միջոցների գործածությամբ ևս գրողը ցանկացել է կենդանի, բնական խոսքի պատրանք ստեղծել» (Լ. Եզեկյան, *Ուշվ. աշխ.*, էջ 216)։ Շատ դեպքերում այս միավորները, համեմված բարբառային իրողություններով, Աբովյանի լեզուն հեռացնում են գրականացումից՝ միաժամանակ լեզվում առաջ բերելով պատկերավորման նոր միջոցներ, գրական լեզվի համար վերաիմաստավորված կամ պատճենված նորանոր արտահայտություններ. ինչպես՝ ֆլան-բարդը - «ինչ-որ

ժամանակ», այստեղ՝ «հին ժամանակներում»։ «Էս ժամիցը հեռու կենանք, լավ կրլի. չունքի ասում են՝ թե ֆլան-թարդդին մեկ խան էկել ա, թե քանդի... » /Վ.Յ. 203/, խաթա-բալա - «պատուհաս», «փորձանք», այստեղ՝ «անհաճո դրություն»։ «Հարամ ըլի էն հացն էլ, էն ջուրն էլ, խաթա-բալի մեջ ընկանք, էլի» /Վ.Յ. 42/, ղշդրու-ղալմաղալ - «աղմուկ-աղաղակ», «տազնապ», այստեղ՝ «բամբասանք», «լուր»։ «Երեկ իրիկուն մթնով գերեզմանատան մոտովն անց կենալիս, էնպես մեկ ղշդրու-ղալմաղալ իմացա... » /Զ.Վ.Պ. 169/ և այլն։

Աբովյանի գեղարվեստական արձակում կան մեծ փոխառյալ հարադրական բարդություններ, որոնց բաղադրիչները իրար հետ կապվում-միանում են համադասական շաղկապներով։

Հանդիպած շաղկապական բարդությունները մեծ մասամբ կազմվում են ու շաղկապով, արտահայտում են իրար առնչակից մշակակություններ և, համապատասխան դեպքերում, զանազան իրողությունների միջև դրսևորվող կապեր ու հարաբերություններ։ Ըստ իմաստային հարաբերության՝ մենք սրանք պայմանականորեն բաժանեցինք որոշակի տեսակների.

ա/ Շաղկապական բարդություններ, որոնք կազմված են իրար հոմանիշ (նույնանիշ և համանիշ) հարադիր փոխառություններից. թուփ ու թվանք - «հրագեն»/Ա.Լ.Ք. 247/, չուլ ու փալաս «լաթ»/Ի.Յ. 48/, խաթա ու բալա - «մեղք»/Ի.Յ. 47/, մալ ու դովլաթ - «ունեցվածք» /Վ.Յ. 66/, և այլն։

բ/ Իմաստով առնչակից կամ հարաբերակից բառերի հարադրությամբ կազմություններ նույնպես հանդիպում են։ Այդպիսիք շատ են, օր.՝ թամաշա ու մաղլը - «ներկայացում» /Վ.Յ. 40/, դուրդ ու դուշ - «զազան ու թռչուն» /Վ.Յ. 78/, քեֆ ու մարաքյա - «ուրախություն» /Վ.Յ. 76/, դարավաշ ու գյունի - «ծառա ու հարճ» /Ի. Յ. 51/, դափ ու դարյա - «թմբուկ» /Վ.Յ.38/ և այլն։ Բարդության այս տեսակը նախադասություններում հանդես է գալիս կայուն բնույթով, այսինքն՝ բաղադրիչների սերտ միասնությամբ։ Այդպիսի կազմություններով բարդությունները նախադասություններում գիտակցվում են որպես իմաստային մեկ միավորներ՝ շարադրանքին հաղորդելով իրենց յուրահատուկ «ռիթմը և բաղաձայնությը (ալիտերացիան)» (Գ. Զահուկյան, *Մշվ. աշխ., էջ 218*)։

Աբովյանի արձակում բարդություններից ամենաշատը փոխառյալներով կազմված բայական վերլուծական բարդություններն են։ Փոխառյալ բայական հարադրությունները, հիմնականում հարստացել են աշխարհաբար լեզվի հանդես գալու շրջանում, մեկ՝ փոխառությունների հաշվին։

Փոխառյալ բաղադրիչներով բայական բարդությունները լեզվին առավել քան ժողովրդայնություն են հաղորդում՝ միաժամանակ հանդիսանալով գեղարվեստականի պատկերման միջոցներ. «Հարադրավոր բայերն ու դարձվածք-

ները, երբեմն լինելով գեղարվեստական պատկերների յուրահատուկ տեսակներ, անսահմանորեն հարուստ են իրենց արտահայտչական հնարավորություններով, գունագեղ պատկերավորությամբ» (*Ռ. Իշխանյան, Բակունցի լեզվական արվեստը, Երևան, 1965թ., էջ 108*):

Փոխառյալ բաղադրիչներով բայական հարադրական բարդություններից առավել տարածված են անել բայով ձևերը, որն օժանդակ բայի դերի կրողն է. «Գործածվելով բառարմատների կամ նրանց նման նշանակություն ունեցող բառերի հետ՝ կազմում է բազմաթիվ հարադրյալ բայեր»,³¹ ինչպես՝ փեջքաշ անել, դարդ անել /Վ.Յ. 264/, դուման անել, տնագ անել /Զ.Կ.Պ. 83/, եսիր անել /Ա.Լ.Ք. 260/, դիմիշ անել /Վ.Յ. 48/, դոնաղ անել /Թ.Յ.Յ. 43/, հեքիմություն անել /Պ.Յ.Պ. 457/, թամաշ անել /Վ.Յ. 269/, յարալու անել /Օ. 269/ և այլն:

Զեզոք սեռի գործածության պահանջով Արովյանը անել բայական բաղադրիչի փոխարեն դնում է լինել բայը: Զպետք է կարծել, որ անել և լինել բայերը միշտ զուգահեռաբար են հանդես գալիս, որովհետև բարդություններում հանդիպում ենք լինել բայով գործածական ինքնուրույն ձևերի նույնպես, ինչպես՝ բեղամաղ լինել - «*Չորորդոն էլ ասեց՝ որ բեղամաղ չըլի, որ մա նրան պտի թալանի*» /Զ.Կ.Պ. 88/ և այլն:

Արովյանի գործածած լինել բայով փոխառյալ հարադրությունները հիմնականում հանդես են գալիս որպես անանցողական բայաձևեր, օր.՝ խաթրջամ լինել /Վ.Յ. 54/, դարդավարամ լինել /Պ.Տ. 194/, գյոռբեգյոռ լինել /Լ.Կ. 107/, գյում լինել, դայամիշ լինել /Ա.Լ.Ք. 237/ և այլն: Սրանք, անշուշտ, Արովյանի լեզվի հարստացման միջոցներից են. ինչպես՝ սաղ լինել (հանդիպում ենք մաև սաղանալ, սաղացնել ձևերին. բառը շատ տարածված է ու առավել վաղ փոխառություն է, այդ պատճառով բավականին ճկուն է դարձել հայերենում) /Կ.Պ. 107/, թոփ լինել - «Մեչդի աղոթարանի առաջին մեծ բազմություն կա թոփ էլած...» /Վ.Յ. 91/, սուրութմիշ լինել - «...գլուխը քարեքար տալիս, յա սուրութմիշ ըլելով, գետինը լիզելով՝ ֆառաշների ոտներն ընկնում...» /Վ.Յ. 241/, փայ լինել - «Սատանի փայ ըլի, աչքը դուս գա, գյոռբեգյոռ ըլի՝ ով որ էս կարթալը սահմանել ա» /Լ.Կ. 107/ և այլն:

Վերը բերված բարդություններից բացի հանդիպում ենք մաև անվանական փոխառություններից ստեղծված այնպիսի հարադրական բայերի, որոնց օրինակը մինչ այդ գոյություն չուներ, իսկ նման բարդություններ ստեղծելու համար հայերենը ունի բավական բայեր: Այդ բարդություններում, ինչպես նկատում է Ա. Աբրահամյանը, իբրև հարադրության բաղադրիչ մեծ մասամբ հանդես են գալիս ավելի դինամիկ գործողության գաղափար արտահայտող բայեր (*Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Ե., 1962թ., էջ 83*): Ղրանք, ըստ

իմաստի, ամբողջական բառույթներ են կամ շարժման արտահայտման ամբողջական կառույցներ, իսկ ըստ ձևի՝ պահպանում են իրենց հիմնական բաղադրիչների ձևային առանձնահատկությունը և հանդես գալիս իբրև վերլուծական կազմություններ՝ ջաֆա քաշել /Լ.Կ. 71/, մուղայիթ կենալ /Լ.Կ. 76/, ջանը հանել, քայլեն տանել, /Լ.Կ. 107/, շհադ մնալ /Վ.Յ. 110/, փեջքաշ բերել /Վ.Յ. 42/, դրադ դնել /Վ.Յ. 43/, ջանը առնել /Զ.Կ.Պ. 77/, գյուլլեն տանել /Զ.Կ.Պ. 82/, հունար բանեցնել /Վ.Յ. 82/, ռաստ բերել /Ա.Լ.Բ. 237/, խաթր առնել /Վ.Յ. 83/, ռահմ ընկնել /Զ.Կ.Պ. 95/, թասիբ քաշել /Պ.Տ. 181/ և այլն:

Ամփտելի է, որ այդ հարադրությունների մեծ մասը ունի դարձվածքային առանձնահատկություններ. «Վերք Չայաստանի» վեպի համապատասխան օրինակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, - նշում է Լ. Եզեկյանը, - որ եթե ժողովրդախոսակցական ոլորտին պատկանող հարադրությունները փոխարինվեն գրական լեզվի իրենց համարժեքներով, ապա՝ ամենից առաջ խոսքը կկորցնի կենդանությունը, ուժգնությունն ու բնականությունը» (Լ. Եզեկյան, *Նշվ. աշխ., էջ 221*), փոխառյալ բաղադրիչներով բարդությունների շնորհիվ հայերենում առաջ են եկել մի շարք դարձվածքներ՝ օյն գալ - խաղ խաղալ, դրադ դնել/ընկնել - կողք դնել/ընկնել, չարա անել - դեղ անել, ջանը առնել - հոգին առնել, հանել և այլն:

Բավական շատ է այն փոխառությունների թիվը, որոնցով կազմվել են հարադրական բարդություններ. այսպես՝ «Իշի հարսանիքը» պատմվածքում գործածված (մաս կրկնությամբ) 262 արևելյան փոխառյալներից 42-ը կազմել են բայական հարադիր բարդություններ:

Ինչպես շատ հարադրություններ, տալ բայով կազմված ձևերը նույնպես հանդես են գալիս իմաստաբանական որոշակի առանձնահատկություններով: Ըստ այդմ, մենք Արուսեանի գործածած տալ բայով հարադրությունները բաժանում ենք երկու հիմնական խմբերի. պատճառական հարադրություններ, որոնք ունեն քերականական առանձնահատկություն և հանդես են գալիս սեռային ցուցիչով՝ իբրև ներգործական սեռի բայեր (այդպիսիք զուգահեռ ձևեր չունեն)՝ թայթի տալ «շտապեցնել» - «Ջաստավի մոտին որ դագաղն աչքովս չընկալ՝ երեսս շուռ տվի, որ չտեսնիմ, ու դրոշկապանին թայթի տվի» Խ.Յ.43/: Գայերենում պատճառական այնպիսի հարադրավոր բարդություններ են հանդիպում, որոնք «տալ բայի հարադրությամբ պատճառական բայեր են կազմում մաս ներգործական սեռի հարադրավոր բայերից, ինչպես՝ կուլ տալ տալ, քաշ տալ տալ» (Վլ. Մարգարյան, *Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990թ., էջ 105*): Ստ. Պալասանյանը նման կառույցների մասին գրում է. «Իսկ եթե հարկ լինի յայտնել, թե գործողութիւնը երրորդի ձեռով է կատարվում, այն ժամանակ

տալ բայը կրկնվում է. գրել տալ տուի, կարել տալ տուինք: - Այս վերջին ձևը գրոց լեզուն չունի» (Ստ. Պալասանյան, *Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870թ., էջ 79*): Դա ժողովրդականին բնորոշ մի քերականական կազմություն է, որն իր մեջ է ընդգրկել նաև անվանական փախառյալ բառը՝ իբրև հարադիր՝ մարիֆաթ տալ տալ - «շնորհք տալ տալ», «հնարիմացություն տալ տալ» - «Դու ինձ հետ ինչպես քո որդու հետ ես վարվում, ինձ ուսումն, մարիֆաթ տալ տալիս» ԼՊ.Տ. 182/: Հարադրություններ, որոնք զուգահեռ ձևեր ունենալ չեն կարող և իրենցից ներկայացնում են դարձվածքային հարադրություններ կամ պարզապես հարադրական բայեր, ինչպես մյուսները՝ չադիր տալ - «տեղակայվել», «ճամբար դնել» «Սեկ անգամ էլ իր ղոնշունովը մեկ գեղի մոտ չադիր էր տվել» Զ.Կ.Պ. 87/, բիսմ տալ - «...Աղանի. մերդ մեկ հատ ա քեզանից բերել, հազար տարի անց կենա, քեզ մեան մեկն էլա չի՝ բիսմ տալ» Լ.Հ. 48/:

Արևելյան լեզուներից հայերենի ժողովրդախոսակցականին անցած փոխառությունների ազդեցությամբ փոփոխվել է բառապաշարը, մի երևույթ, որ աղերսվում է արտալեզվական գործոնների հետ. «Տվյալ լեզվում որևէ օտար լեզվի բառերի քանակը, նրանց բնույթը, վերջին հաշվով փոխատու և փոխառու լեզուները կրողների՝ երկու ժողովուրդների պատմության, տնտեսական-քաղաքական, մշակութային կյանքի ու հարաբերությունների լեզվական արտացոլումն է» (Լ. Հովհաննիսյան, *Մշվ. աշխ., էջ 39*):

Հաճախ է պատահում, որ փոխառությունների գործընթացում բառն ու հասկացությունը համատեղ են փոխառվում, ասել է, թե նոր հասկացություններ արտահայտելու համար ժողովրդախոսակցականը շատ հաճախ դիմել է նաև օտար լեզուներին. այս գործընթացում հարստացել է բառապաշարը, վերջինիս համանշային շարքերը: Ժողովրդական փոխառությունները, ըստ իմաստային-կիրառական ոլորտների, միանգամից չեն անցել, այլ՝ աստիճանաբար՝ հայերենի՝ արևելյան լեզուների հետ անընդմեջ և սերտ շփումների պայմաններում: Այդ փոխառյալներից որոշները վերաիմաստավորվել են հայերենում, ենթարկվել իմաստային փոփոխության՝ ընդլայնում, շրջում, նեղացում, իսկ «խոսակցական տարատեսակները լեզվական այլաբանությունում» (Շ. Դ. Кавцельсон, *Содержание слов, значение и обозначения, Москва-Ленинград, 1965г., стр. 40-45*), բնականաբար, իմաստային զանազան դրսևորումներ են ունենում՝ երբեմն էլ հանդես գալով փոխաբերությամբ: Այսուհանդերձ, փոխառությունները, կիրառվելով այս կամ այն բնագավառում, ձեռք են բերում բոլորովին նոր որակ, անգամ, հնարավոր է՝ նոր իմաստ, որը կարող է բացակայել փոխատու լեզվում: